ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 44

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Այգավան համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի եվ վճարների մասին: */Զեկ. Վ.Հարությունյան/*
2. Համայնքի համար կատարված ասֆալտապատման աշխատանքները գույքագրման ցանկում ընդգրկելու մասին: */Զեկ. Վ.Հարությունյան/*
3. Այգավան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին: */Զեկ. Վ.Հարությունյան/*
4. Այգավան համայնքի սեփականության գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին: */Զեկ. Վ.Հարությունյան/*

Կողմ – 6 Դեմ-0 Զեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 45-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18)-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքում 2021 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ – 6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 46

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ հոդվածի 1-ին մասի 10)-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Այգավան համայնքի Գառնիկ Ղուկասյան փողոցի 641մ և 276մ հատվածների ասֆալտապատման աշխատանքները՝ արժողությամբ՝ 53064,840 / հիսուներեք միլիոն վաթսունչորս հազար ութ հարյուր քառասուն/ դրամ ընդգրկել գույքագրման ցուցակում:

Կողմ –6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 47-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանի <<Այգավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> ավագանու թիվ 50-ն որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում:

1. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 990,0 /ինը հարյուր իննսուն/ հազար ՀՀ դրամ տալ, 01-03-03-55 Ընդհանուր բնույթի այլ ծախսեր 4229 Այլ տրանսպորտային ծախսեր հոդվածին, ճշտված պլանը սահմանել 990,0 /ինը հարյուր իննսուն/ հազար ՀՀ դրամ:
2. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 200,0 /երկու հարյուր/ հազար ՀՀ դրամ տալ, 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4261- Գրասենյակային նյութեր և հագուստներ հոդվածին, ճշտված պլանը սահմանել 700,0 /յոթ հարյուր / հազար ՀՀ դրամ:
3. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891 հոդվածից 990,0 /ինը հարյուր իննսուն/ հազար ՀՀ դրամ տալ, 10-07-01-54 Սոց անապահով անձանց 4267 Կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին, ճշտված պլանը սահմանել 990,0 /ինը հարյուր իննսուն/ հազար ՀՀ դրամ:

Կողմ – 6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

3.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 48

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32)-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի սեփականության գույքի գույքագրման արդյունքները համաձայն հավելված 2-ի:

Կողմ – 6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2020 թվականի
26 նոյեմբերի թիվ 45-Ն որոշման

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքում 2020թվականի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ:

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ:

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ:

- 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ:

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և

շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 45000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրադեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6300 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2700 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6300 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 37500 դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 375000 դրամ:

դ. խաղատների համար՝ 750000 դրամ:

ե. շահումով խաղերի համար՝ 375000 դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ 112500 դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2700 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով,

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ:

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ

14)Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 15000 դրամ:

2. Սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են համաձայն գոտիավորման.

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխելու վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000,

2) շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 15000 դրամ

3) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ

4) համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կազմված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝

ա) աճուրդի դեպքում 10000դրամ

բ) վարձակալության մրցույթի դեպքում՝ 10000 դրամ

4) Համայնքի տարածքում աղբահանության վճար սահամանել՝

ա) Կենցաղային աղբի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100դրամ:

բ) ընտանիքում երեք և ավելի բնակչի դեպքում աղբահանության վճար սահամանել ամսական 300 դրամ:

գ) իրվաբանական անձանց համար սահմանել

1. Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ ամսական 1քմ. համար 50 դրամ

2.Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար ամսական՝ 1քմ- 5 դրամ

3. կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային շինություններ՝ ամսական 1քմ- 3 դրամ:

դ) համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ

5) Սահմանել համայնքի ենթակա կազմակերպությունում ծնողական մուծումների հետևյալ դրույքաչափերը՝ <<Ժպիտ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում համայնքի բնակիչ յուրաքանչյուր երեխայի համար ամսական՝ 5000 դրամ, այլ համայնքից հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 10000:

6) Օգտագործված կենցաղային ջրի համար տեղական վճարը սահմանել ամսական յուրաքանչյուր շնչից 30 դրամ:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար 500 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ

2020 թվ. Նոյեմբեր 26 թիվ 48 որոշում Հավելված 2

Անվանում	Համախառն հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք	Տեսակ	Գտնվելու վայր
Սպասասրահ	410,000.00	0.00	410,000.00	7	002
ԷՑՎ -8-40-70	570,000.00	0.00	570,000.00	209	002
602000800	490,000.00	0.00	490,000.00	7	002
2015846 մոդուլ	250,000.00	0.00	250,000.00	7	002
Շարժիչի աջ բարձիկ	50,000.00	0.00	50,000.00	7	002
Գառնիկ Ղուկասյան փողոցի 641 և 276 մ հատվածներ	53,064,840.00	73,701.17	52,991,138.83	222	001
Ավտոմեքենա Worq focus	2,596,750.00	491,893.32	2,104,856.68	510	001
Խորհրդական սեղան	0.10	0.04	0.06	620	001
Կաշվից բազկաթոռ	5,194.00	1,967.77	3,226.23	620	001
Կաշվից աթոռ	1,833.00	694.44	1,138.56	620	001
Փայտից աթոռ	0.10	0.04	0.06	620	001
Գրապահարան	0.10	0.04	0.06	620	001
Սեղանի հեռախոս	0.10	0.04	0.06	621	001
Ջահ	17,841.00	4,224.45	13,616.55	629	001
Գրաեղան	6,660.00	1,261.58	5,398.42	629	001
Գրասենյակային կաշվից բազկաթոռ	9,369.00	1,774.74	7,594.26	620	001
Աթոռ	1,874.00	354.99	1,519.01	620	001
Գրասեղան	0.10	0.02	0.08	620	001
Աթոռ փայտից	0.10	0.02	0.08	620	001
Աթոռ կաշվից	1,528.00	289.44	1,238.56	620	001
Պահարան հրկիզվող և չհրկիզվող	0.10	0.02	0.08	620	001
Էլ ջեռուցիչ	0.10	0.02	0.08	622	001
Գրասեղաններ	0.10	0.02	0.08	620	001
Համակարգիչներ	0.10	0.04	0.06	610	001

Աթոռ փայտից	0.10	0.02	0.08	620	001
Բազմոց	0.10	0.02	0.08	620	001
Պատ պահարան	0.10	0.02	0.08	620	001
Չհրկիզվող պահարան	0.10	0.02	0.08	620	001
Աթոռներ կաշվից	3,055.00	578.70	2,476.30	620	001
Էլ. վառարաններ	8,432.00	1,597.25	6,834.75	620	001
Գրաեղան	0.10	0.02	0.08	620	001
Հագուստի պահարան	0.10	0.02	0.08	620	001
Օֆիսի բազմոց	9,328.00	1,766.97	7,561.03	620	001
Աթոռ	917.00	83.53	833.47	620	001
Էլ. ջեռոց	0.10	0.02	0.08	620	001
Փափուկ կահույք	203,667.00	38,579.94	165,087.06	620	001
Խմելու ջրի սառեցման ապարատ	146,640.00	34,721.88	111,918.12	622	001
Հեռուստացույց SAMSUNG PS42b450b1	190,938.00	45,210.90	145,727.10	622	001
ՏեսախցիկHD5c2el	99,797.00	23,630.24	76,166.76	622	001
Տեսախցիկ HD5cly	80,194.00	18,988.59	61,205.41	622	001
Ձայնագրող սարք	71,729.00	16,984.22	54,744.78	622	001
Կոշտ սկավառակ2 T	64,359.00	15,239.12	49,119.88	622	001
Պլաստմասե աթոռ մետղական ոտքերով	87,068.00	16,492.99	70,575.01	620	001
Տպիչ Canon MF211	253,129.00	59,936.68	193,192.32	619	001
Տեսախցիկ	31,186.00	7,384.32	23,801.68	622	001
Տեսախցիկի ամրակ	44,909.00	10,633.69	34,275.31	622	001
Վառարան canon3220	22,913.00	8,680.66	14,232.34	610	001
Բջջային հեռախոս	24,440.00	9,259.17	15,180.83	621	001
Ձայնասփյուռ	76,375.00	18,084.31	58,290.69	619	001
Պլաստմասե սեղան	96,233.00	18,229.08	78,003.92	620	001
Փոխակերպիչ	32,078.00	8,680.61	23,397.39	611	001
Սնուցման բլոկ	12,220.00	3,306.85	8,913.15	611	001
Թմբուկ քաթրիջի	13,035.00	3,527.40	9,507.60	611	001

Ստեղնաշար	6,517.00	1,763.56	4,753.44	611	001
Քաթրիջի մաս	11,405.00	3,086.30	8,318.70	611	001
Անվադողեր215/55/R16	162,933.00	30,863.84	132,069.16	439	001
VGA մալուխ	6,517.00	1,763.56	4,753.44	611	001
Փոխակերպիչ	6,110.00	1,653.42	4,456.58	611	001
Պոմպ	985,000.00	186,585.12	798,414.88	412	001
Կառավարման վահանակ	218,000.00	51,618.72	166,381.28	622	001
Ford focus տանող և տարվող սկավառակների կոմպ	400,000.00	75,770.61	324,229.39	439	001
Պոմպ ջրի MHF/7 հոսանքի կարգավորիչ	250,000.00	47,356.63	202,643.37	412	001
Սպասարահ	771,000.00	73,023.92	697,976.08	253	001
CANON 232 VI -ն	140,000.00	37,885.31	102,114.69	611	001
Համակարգիչ	280,000.00	106,078.86	173,921.14	610	001
Մարկոս 4 դ	207,000.00	39,211.29	167,788.71	412	001
Էլեկտրական շշակ	0.10	0.02	0.08	439	001
Սերոբ Հովհաննիսյան փողոցի 300մ հատվածի ասֆալտապատում	12,120,102.00	384,183.34	11,735,918.66	222	001
Համայնքապետարանի շենք	20,421,608.00	322,366.18	20,099,241.82	101	001
Մշակույթի տուն	46,906,141.00	740,438.94	46,165,702.06	101	001
	141,940,865.80	**3,041,409.06**	**138,899,456.74**		

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դավթյան

Գլխավոր հաշվապահ՝ Լ.Սահակյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան